

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ.

ԳԼՈՒԲԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳ

Հարգելի՛ հայրենակիցներ,

Ներքին թշնամությունը ու մրցակությունը մի կողմ դնելու ժամանակն է, այլև հապաղելը սպառնալիք է մեր գոյության համար: Խնդրում եմ, ծանոթացեք «Համահայկական ուղերձի» բովանդակությանը, վստահ եմ՝ ձեզ մոտ ևս կլինեն համահայկական միասնությանը հասնելու մտքեր, եկեք միասնաբար կյանքի կոչենք մեր ազգային իղձերը՝ երաշխավորել հայության անվտանգ ապագան: Մենք պատրաստ ենք համագործակցելու յուրաքանչյուր հայի հետ, կապնվեք մեզ հետ, ուղարկեք ձեր առաջարկներ ու դիտարկումները ՀԱՆՈՒՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՊԱԳԱՅԻ:

**«Համահայկական կոնգրես» ՀԿ
Նախագահ Արմեն Բաղայան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՊԱԳԱՆ.

Հայաստանը տարածքով 143-րդ երկիրն է աշխարհում, բնակչությամբ՝ 137-րդը, ՀՆԱ-ով՝ 136-րդը, արտահանումների ծավալով՝ 135-րդը: Հայաստանը չունի ելք դեպի ծով, չունի նաև նշանակալի բնական ռեսուրսներ: Ակնհայտ է, որ նման ներուժով պետության անկախությունը մեծ հարցականի տակ է. Հայաստանն ուղղակի դատապարտված է լինել գլոբալ կամ տարածաշրջանային տերությունների քաղաքականության կցորդ:

Հայաստանի բացառիկ ներուժը հայոց սփյուռքն է, որը կարող է լուրջ ռեսուրս դառնալ միայն ճիշտ օգտագործման պարագայում: Այլ պայմաններում սփյուռքի ներուժը կարող է ամբողջությամբ զրոյանալ՝ հանգեցնելով հայկական գաղթօջախների վերացմանն ու հայ բնակչության ուժացմանը:

Հայաստանի ու հայության ապագան միայն միասնականության մեջ է: Թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում առանձին կազմակերպությունների ու անհատների շրջանում ծնվում են համահայկական միասնության նախաձեռնություններ, սակայն չեն դառնում գործուն հաստատություններ: Համահայկական կառույց ձևավորելու բավարար ներուժ ունի միայն Հայաստանի Հանրապետությունը, միայն վերջինս կարող է նախաձեռնել համահայկական լեգիտիմ կառույց:

Ներկա գլոբալիզացիոն միտումների պարագայում անհրաժեշտություն է առաջանում վերանայելու «պետության» հայեցակարգը: «Հայաստանը» ոչ թե մի փոքր հողամասում ծվարած երկիր պետք է լինի, այլ աշխարհի ողջ հայությանը համախմբող «ՊԵՏ(Ք)ՈՒԹՅՈՒՆ»:

ԳԼՈՐԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ.

Հայաստանի Հանրապետությունն անկախ հայկական պետականության ձևավորման առաջին փուլն է, այն պետք է տրանսֆորմացվի նոր որակի կառույցի՝ «գլոբալ ազգային պետության», որը պետք է լինի անկախ բնակության երկրից ու քաղաքացիությունից հայ ազգի ներկայացուցիչներին միավորող կենտրոն: Աշխարհի ցանկացած հատվածում գտնվող յուրաքանչյուր հայ պետք է զգա, որ իր թիկունքին կանգնած է ավելի քան 10 միլիոնանոց հայությունը, որը միշտ պատրաստ է զորավիգ լինել իրեն: Սա է «Գլոբալ Հայաստանի» տեսլականը:

«Գլոբալ Հայաստանի» գաղափարը պետք է միավորի բոլորին՝ անկախ առկա տարածայնություններից ու անգամ թշնամանքից, այլ պարագայում հայության ապագան հարցականի տակ է:

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

Հայաստանի Հանրապետության, Արցախի, Հայկական Սփյուռքի, Հայոց եկեղեցու, համայնքների, կազմակերպությունների, կուսակցությունների, առանձին խմբերի ու անհատների միասնական նպատակների օրակարգն ապահովելու համար նախ անհրաժեշտ է ձևավորել համընդհանուր ինկլուզիվ երկխոսության հարթակ: Ժամանակակից տեղեկատվական ցանցային տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս հեշտության ձևավորելու ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՑԱՆՑ, որի կիրառանվտանգությունն ու կառավարումը կստանան Հայաստանի Հանրապետությունը:

Երկխոսության հարթակի առկայությամբ ձևավորվում է ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ՝ կարևորագույն խնդիրների ու դրանց լուծման ճանապարհների ցանկը: Ներկայացնում ենք այդ օրակարգի այս պահին առանձնացված որոշ ուղենիշային խնդիրներ.

ՈՒՂԵՆԻՇ 1. ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՂՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ.

Հայաստանի, Արցախի և Սփյուռքի միասնականությունն ու դրա ուղղությամբ ընթացող ամենօրյա գործնական աշխատանքը կապահովեն «Համահայկական նախաձեռնությունների կենտրոնները», որոնք կգործեն Հայաստանի, Արցախի կառավարություններին, տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններին, Հայաստանի դիվանագիտական ու հյուպատոսական ծառայություններին, Սփյուռքի հայկական կառույցներին կից: Համահայկական նախաձեռնությունների կենտրոնները կլինեն այն օղակները, որտեղ կմշակվեն Համահայկական օրակարգի հարցերը, որտեղ հայ ազգի ներկայացուցիչները հնարավորություն կունենան հանդես գալու իրենց նախաձեռնություններով՝ թե՛ քաղաքական, թե՛ հասարակական, թե՛ տնտեսական և թե՛ ցանկացած այլ բնույթի: Այս կենտրոնները կլինեն նաև հայապահպանության հենասյուն՝ հայոց պատմության, լեզվի, կրոնի պահպանման ու տարածման օղակներ:

ՈՒՂԵՆԻՇ 2. ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ.

Համահայկական աշխարհաքաղաքականությունն այն երկարաժամկետ ռազմավարական ծրագիրն է, որ պետք է ուղենշի Հայաստանի ու հայության ապագան (ովքե՞ր ենք մենք և ու՞ր ենք ուզում հասնել): Վերլուծելով գլոբալ միտումները՝ հստակեցնել դրանցում հայության դերն ու անելիքը: Պետք է հրաժարվել «կցորդային» արտաքին քաղաքականությունից և հանդես գալ որպես համաշխարհային վերափոխումների դրոշակակիր: Հայությունը կարող է դառնալ.

- Արևմուտքի և Արևելքի միջև բարեկամության կամուրջ, երկխոսության հարթակ,
- Գլոբալ խաղաղարար և համերաշխության խորհրդանիշ,
- Համամարդկային սպառնալիքների լուծումներ առաջարկող ուղեղային կենտրոն և այլն:

Այս համատեքստում պետք է նաև մշակել Արցախյան հակամարտության հայանպաստ լուծումն ու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման նոր ռազմավարությունը:

ՈՒՂԵՆԻՇ 3. ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆԱԲԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՏԵՂԾՈՒՄ.

Համահայկական ցանկացած նախաձեռնություն իրագործելի է, եթե առկա է բավարար տնտեսական հենք: Այստեղ է, որ օրակարգ է իջնում ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱ-ի ընդլայնման հարցը: Առաջնահերթ պետք է ՀՀ պետական քաղաքականությամբ վերացնել երկրի արտաքին առևտրաշրջանառության բացասական հաշվեկշիռը՝ ներդնելով «իմպորտափոխարինման» հատուկ քաղաքականություն: Այն ամենն ինչ անհրաժեշտ է Հայաստանին ու հայությանը պետք է արտադրվի Հայաստանում կամ Հայոց սփյուռքում, այն պետք է առնչվի տնտեսության բոլոր ոլորտներին: Մենք չպետք է մրցակցենք միմյանց հետ, այլ պետք է միասնաբար մեր տեղը գրավենք համաշխարհային շուկայում, այնպիսի արտադրություն տանք ու այնպիսի ծառայություններ մատուցենք, որ մրցունակ լինենք համաշխարհային շուկայում: Այսպես քայլ առ քայլ պետք է գրավենք նոր շուկաներ՝ ամեն կերպ նպաստելով հայկական կապիտալ ունեցող ընկերությունների զարգացմանը: Այդ գործին պետք է կարողանանք ներգրավել բոլոր հայերին՝ ըստ իրենց ունակությունների ու հնարավորությունների:

Սրանք հիմնական ուղենիշներն են, դրանք ենթակա են վերանայման, լրացվելու են առանձին բազմաթիվ խնդիրներով: Հասկանալի է, որ «Համահայկական օրակարգի» ամբողջական մշակումն ու իրագործումն ամենևին հեշտ գործ չէ. հայության բոլոր հատվածները պետք է ունենան հնարավորություն արտահայտելու իրենց դիրքորոշումը և միայն կարծիքների համադրությամբ մենք կկարողանանք ձևավորել հայեցակարգի հիմքերը: Այդ նպատակն է միտված այս համառոտ «Համահայկական ուղերձը» հասցնել հայության ներկայացուցիչներին ողջ աշխարհում:

«ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Գրասենյակ՝ ք. Երևան, Լեռ Կամսարի 30/2, № 28/2

Էլ. փոստ՝ info@geopolitics.am, a.r.badalyan@gmail.com

Կայքեր՝ www.panarm.info, civil.panarm.info, www.geopolitics.am

